

ՆԱՐԵԿԱՑԻԱԿԱՆ ԱՎԱՆՌԱՊԱՏՈՒՄԸ ԹՂԿՈՒՐԱՆՑՈՒ ՄՇԱԿՄԱՄԲ

Վ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Նարեկացու մասին հյուսված գրույցները շատ են բազմաբնույթ, ու այդ առումով բավականին պերճախոս է նաև միջնադարը: Նարեկացու կերպարը միշտ էլ եղել է ժողովրդի ուշադրութիան կենտրոնում: Պատահական չէ, որ նրա մասին, բացի գրավոր հիշատակություններից ու վարքերից, ստեղծվել են նաև ժողովրդական ավանդություններ: Արդեն 12-րդ դարում Վարդան Հայկազնը «Տաղ գերեզմանականում» դիմում է Նարեկացու հանճարին՝ նրան անվանելով «փիլիսոփային Նարեկացի»: Մեծ բանաստեղծի վարքի ստեղծումը եղել է հայ մատենագիրների և գրիչների մտահոգության առարկան: Բայց առկա ձևազարկան տվյալները ցույց են տալիս, որ 12-րդ դարի 70-ական թվականներին, երբ երևան է եկել վարքի նախնական օրինակը, Նարեկացու կյանքի մասին մատենագրական տեղեկությունները շափազանց աղքատիկ են եղել: Բացի նրա հիշատակարաններից, անշուշտ պահպանված են եղել նաև բանավոր ավանդություններ, որոնցից կարող էր օգտվել վաղագիրը: Ահա այդ կարգի վկայությունների հիման վրա էլ գրվել է բանաստեղծի վարքը և ժամանակի ընթացքում լրացվել նոր տվյալներով՝ նախնական օրինակի համեմատությամբ փոքր-ինչ ընդարձակվելով:

Նարեկացու շունչը զգացվում է ողջ միջնադարում, հայ միտքը երբևէ աննկատ չի թողնում Նարեկացու մատենքները: Նարեկը իր վարակիչ էությունը մարդկային գոյի հավերժական ուղեկիցն է: Պատահական չէ, որ Թլիկուրանցու նման տաղանդավոր մի բանաստեղծ հետագա ժամանակներին է ավանդում Նարեկացու կերպարի իր գեղարվեստական ընկալումը: Նարեկացու կերպարը, ինչ խոսք, հայտնություն չէր հայոց միջնադարում, բայց և այնպես Թլիկուրանցու մշակումը ևս, կարծում ենք, իր արժանավոր տեղն ունի Նարեկացու սրբացման գործում: Որ Թլիկուրանցու տաղը ժողովրդական ավանդության մշակում է, անտարակուսելի է, մանավանդ որ բանասիրությունը այս հարցում իր արժանի խոսքն ասել է: Միջնադարում Նարեկացու մասին ստեղծվել է գրույցների և ավանդությունների մի հարուստ շարք, որը, ի տարբերություն գրական-հայտնավորքային վարքի, ներկայացնում է «մի ուրիշ նարեկացիապատում»՝ քրիստոնյա հերոսի ժողովրդաշունչ կերպարը: Ավանդությունների մեծ մասը հրատարակել է Ա. Ղանալանյանը «Ավանդապատում» գրքում: Մատչոցյան Մատենադարանի թիվ 9861 ձեռագրում պահպանվել է Նարեկացու գրուցապատում վարքը՝ «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացոյն» խորագրով: Այդ գործում ամեն մի ավանդություն աչ թե անշատ միավոր է, ինչպես հրատարակել է Ղանալանյանը, այլ Նարեկացու կյանքի ընդհանուր պատմության մի գրվազը: Ավանդությունների այդ շարքը ներկայացնում է հետևյալ թեմատիկան.

- | | |
|--|--|
| 1 Նարեկացին Եղիշի աշակերտ, | 9 Աստվածների տեսիլը. ուխտազնացություն Երուսաղեմ, |
| 2 Առվի ճանապարհ բացելը, | |
| 3 Մշակներին հաց տանելը, | 10 Հեթանոս վարպետին հարություն տալը և մկրտելը, |
| 4 Հոտաղ Բզնունյաց ներքին Գաղտի գյուղում, | |
| 5 Նախարարած Մշո Հարտոնք գլուղում, | 11 Աղքատ անդամալուծի կերպարանքով Քրիստոսը և Նարեկացին, |
| 6 Մեռած նորափեսային կենդանացնելը, | |
| 7 Ոչխարի հովիվ Հարգիզ գավառում, | |
| 8 Պարտիզպան Ապարանից Ս. Խաչ վանքում, | 12 Գրիգորը և Գորգ տանուտերը, |

1 Հմմտ. Գրիգոր Նարեկացի, Մատենան ողբերգութեան, աշխ. Պ. Խաչատրյանի և Ա. Ղանալանյանի, Երևան, 1985, էջ 169:

2 Տե՛ս Գ. Հովսեփյան, Ժողովրդական բանահյուսության հետքեր միջնադարյան տաղարաններում, «Արարատ», 1998, էջ 544—551:

3 Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, անտիպ աշխատության մեքենագիր, էջ 245:

- 13 Սոս վարդապետները և Գրիգորի հնարա- 16 Մորթած գոմեշին հարուստն տալի,
 մտուժյունը, 17 Աղթամարցի Անդրեասի և նրա որդու պատ-
 14 Հանդիպումը Սոս վարդապետների հետ, մուժյունը,
 15 Խորոված աղավիններին կենդանացնելը, 18 Քիսիս և նրա ձագերին կենդանացնելը⁴:

Միջնադարյան այս ավանդապատումը անցել է բանավոր և գրավոր ճանապարհ, անշուշտ կրելով մի շարք փոփոխություններ և ազդեցություններ: Այս առումով բանասեր Պ. Խաչատրյանը եզրակացնում է, որ «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացոյն» գործի գրառման և հետագա փոփոխման ընթացքը մեզ ներկայանում է հետևյալ աստիճանավորումով.

ա) եղել է նրա նախնական օրինակը (մեզ չհասած), սքանչելիքների և կենսագրական պատմի ձևով, գրի առնված մինչև 14-րդ դարը՝ Վանա ծովի շրջակա հայկական գավառներում ժողովրդի մեջ նարեկացու մասին պատմվող զրույց-ավանդություններից.

բ) Կիլիկիան Հայաստանում 14-րդ դարի երկրորդ կեսում այդ նախնական տարբերակը վերախմբագրվել է և բովանդակությամբ կապվել Սոս երկրի հետ: Այս վերախմբագրված տարբերակն է, որ, հետագայում ևս մասնակի փոփոխությունների և լրացումների ենթարկված, հասել է մեզ միակ ձևագրով (Մաշտոցի անվան Մատենադարան № 9861 ձեռ.)՝ նախնական տարբերակի էական տեսքը պահպանած, ու այդ նոր տարբերակից է օգտվել Քիլուրանցի⁵: Քիլուրանցու տաղի և «Վարք և պատմութեան» բաղդատումից պարզվում է, որ Քիլուրանցին օգտագործում է միայն ավանդության երեք՝ ԺԲ (1—45 տող), ԺԳ (47—68 տող), ԺԾ (69—100 տող) սքանչելիքները, իսկ տաղի վերջում Քիլուրանցին թողնում է անձնագործմ իր վերջաբանը.

Բաներս Յովհաննէսն ասաց,
 Յովհաննէսն այն Քուրաւրանցիք.
 Ով բանիս իմ ականջ զընէ՝
 Աստուած իւր մեզացն առնէ բողոքիւն⁶:

«Անշուշտ, Քիլուրանցու տաղը, որպես կանոնավոր ուղեգր և հանգավորումով շափածո մշակում, ավելի, քան ավանդությունների արձակ գրառումները, բովանդակչին նրբերանգների առումով հեռացած պետք է լինի աղբյուրից՝ արտահայտելով իր՝ հեղինակի անհատականությունն ու բանաստեղծական ինքնատիպ զգացողությունը: Բայց մի բան անվերապահորեն կարող ենք ասել, և դա ցույց է տալիս «Վարք և պատմութեան» հետ տաղի բաղադրումը, որ քնարերգուն հարազատորեն հետևել է իր աղբյուրին. թեև ընդամենը երեք դրվագ է վերարտադրել, բայց դրանց հաջորդականությունը պահպանել է այնպես, ինչպես աղբյուրում է՝ դուրս թողնելով, սակայն, ԺԳ սքանչելիքը: Գրվագների այդպիսի հերթագայումը (ԺԲ, ԺԳ, ԺԾ սքանչելիքներ) ինքնին վկայում է, որ Քիլուրանցու սկզբնաղբյուրը «Վարք և պատմութիւնն» է, ինչպես իրավացիորեն նկատել է Պ. Խաչատրյանը⁷:

Ինչպես Նարեկացիապատումի բոլոր դրվագների, այնպես էլ Քիլուրանցու տաղի մեջ «պատմականը Նարեկացին է, մեկ էլ այն, որ ժողովուրդը դարեր շարունակ հավատացել է նրա հրաշագործությանը»:

Այնքան զորավոր է Նարեկացու խոսքի և աղոթքի ուժը, որ նա անգամ մեռածին է կենդանացնում, իսկ մահից հետո էլ Նարեկացու հրաշագործությունը փոխանցվում է իր տապանին. «Գեոևս առնէ սքանչելիս մեծամեծս, որք հաւատով գան ի տապան սրբոյն, և ընդունին զառողջութիւնն ամենայն ցաւոց. և որ պարտատէր լինի դառն և գայ ի տապան սրբոյն, աղատի ի պարտուց, և անդարձ մեղաւորացն զզրումն տայ, և զայլ ամենայն զխնդիրս մարդկան կատարէ»⁸,—վկայում է ձեռագիրը: Քիլուրանցու տաղում Գորգիկ տանուտերի դրվագում շեշտվում է, որ Գորգը անբարեպաշտ է ու անհավատ և արգելք է դառնում մշակների եկեղեցի գնալուն: Էմ. Պիվազյանն այս տաղի մեջ էական չի համարում Նարեկացու հրաշագործությունները, կարևորում է «դրանց միջոցով արտահայտված, ինչպես և ամբողջ տաղում զգացվող սոցիալական բովանդակությունը՝ տաղի հեղինակի ժողովրդական-աշխատավորական գաղափարախոսությամբ» (70): Այս մտնեցումը փոքր-ինչ ծայրահեղ է, մանավանդ որ տաղի հետագա շարագրանքը, այսինքն՝ Սոս վարդապետների դրվագը, ամենևին էլ չունի սոցիալական

⁴ Նույն տեղում, էջ 197:

⁵ Նույն տեղում:

⁶ Հովհաննես Քիլուրանցի, Տաղեր, Երևան, 1960, էջ 213: Այս գրքից՝ մեջբերումների հրատարակումները այսուհետև կտրվեն տեքստում, փակագծերի մեջ:

⁷ ՏՆ՝ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացիի և հայ միջնադարը, էջ 198:

⁸ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 506:

⁹ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 9861, էջ 22ա:

բովանդակովքուն, նրանում պարզապես շեշտված են նարեկացու՝ իբրև սրբի հրաշագործութեան թյունները, որը և՛ Քրիստոսանցու տաղի, և՛ «Վարք և պատմութեան» էական գիծն է:

Քրիստոսանցու տաղում նկատելի են ժողովրդական բառ ու բանի հետքերը, որ ինքնին հաստատում է տաղի ծագումը ժողովրդական նյութից: Չափազանցությունը հատուկ է ժողովրդական զրույցներին, որը երևում է նաև այս տաղում: Ենտեղու համար Գորգի անբարեպաշտութունը՝ Քրիստոսանցին գրում է.

Ապրե՛ր է՛ր հարիւր տարի,
Ձէ՛ր եկե՛ր ի ժամատեղին: (205)

Ակնառու է նաև խորհրդավոր թվերի՝ երեքի, յոթի օգտագործումը, ինչպես՝

Երեք օր երեք գիշեր
Կախեցին ի պատն արեգին: (207)

Կամ՝

Եւրք գերեզման բացին,
Հողը մուտ շերետ Գորգիկին: (206)

Գորգիկ տանուտերի և նարեկացու զրվազը (1—46 տողեր) Քրիստոսանցի քնարերգուն ներկայացնում է բավականին հակիրճ ու սեղմ, մինչդեռ «Վարք և պատմութեան» ժբ սքանչելիքում այն ավելի ընդարձակ է և փոքր-ինչ տարօրինակ այն առումով, որ անհիշաշար նարեկացին այստեղ անիծում է Գորգին՝ ասելով. «Եթէ տաս բանացնել կիրակին, դու բաժին լինիս սատանայի»¹⁰, Այստեղ «Վարք և պատմութունը» որոշակիորեն ընդարձակվում է, իսկ տաղում անմիջապես հաջորդում է Գորգի մահը: Ի տարբերություն տաղի՝ «Վարք և պատմութեան» մեջ Գորգը, որ պիտի հետևեր սուրբ նարեկացու պատվիրանին, դիմում է վրեժխնդրության: Նա գնում է Ոստան և բերում երկու քրդի, որոնք շղթայելով նարեկացու ոտքերը՝ զլխիվայր կախում են նարեկա վանքի ս. Աստվածածին և ս. Սանդուխտ եկեղեցիների միջև: Երրորդ օրը հավում է շղթան, և սուրբն արձակվում է: Այս կապակցությամբ բանասեր Պ. Խաչատրյանը նկատում է, որ «նարեկացու ժամանակ, 10—11-րդ դարերում, Վասպուրականում, այն էլ Արծրունյաց Ոստան թագավորանիստում, քրդեր լկային, մանավանդ քրդական իշխանություն, որի պատժիչ զինվորներին հնարավոր լինե՛ր դիմել: Քուրդ մուսուլմանության տարածումն ու բնակեցումը պատմական Հայաստանի, ուրեմն և՛ Վասպուրականի տարածքում կատարվեց բավականին ուշ, 14—15-րդ դարերից սկսած, իսկ 16-րդ դարում ավելի մեծ ծավալ ստացավ՝ իբրև հետևանք օսմանյան բռնապետության հայացինք քաղաքականության: Քուրդ մահմեդականությունը դարձավ թուրքական կայսրության հովանավորյալ հենակետը՝ Հայաստանի ընդհանրից մարդաթափ անելու ճանապարհին: Ուրեմն «Վարք և պատմութեան» մեջ տասներորդ սքանչելիքում երկու քրդերի հիշատակումը պետք է կապել ուշ դարերի պատմական իրականության ազդեցության հետ և համարել հետաստուտ միջարկություն»¹¹: Ազատված նարեկացին անիծում է Գորգին, որն արժանանում է տարօրինակ պատժի: «Վարք և պատմութեան» մեջ ասվում է. «Տարան զԳորգի թաղեցին: Եւ յերեկոյին տեսին զԳորգն ելեալ ի յերես հողին: Եօթն օր օրն երեք անգամ կու թաղէին՝ հողն մուտ չէր տար մեռելին»¹², Իսկ ահա թե ինչպես է ներկայացնում այս հատվածը Քրիստոսանցին.

Երեկ բոլորեց տարին,
Գորգ մեռաւ ի մէջ գիշերին,
Ջոռ մարդ ի յափն առին
Ու տարան եզերն ի հողին.
Եւրք գերեզման բացին,
Հողը մուտ շերետ Գորգիկին.
Երկաթն օղբ արին,

Իւր առից կոճերն անցուցին,
Երեք օր երեք գիշեր
Կախեցին ի պատն արեգին:
Ահայ հոտեցաւ մարմին.
Գորգ անկաւ ի մէջ փողոցին.
Ոչ շուն իւր մսէն ուտէր,
Ոչ թռչունք վերօքն անցնէին: (206—207)

Այս տարօրինակ պատիժը մարդկանց խնդրանքով սուրբ նարեկացին փոխում է՝ հիշելով «զԱստուած կենդանին», իսկ Գորգը «զզլուխն ի վեր վերուց» և ասաց.

Տէ՛ր, ինձ քաղութիւն արա,
Վիս մուր ճամփով կու տանին: (208)

Որից հետո նարեկացին դիմում է Գորգին, թե «հանգի՛ր ի մէջն ի հողին» (208):

¹⁰ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 9861, էջ 14բ:

¹¹ Պ. Խաչատրյան, Գրիգոր նարեկացին և հայ միջնադարը, էջ 218:

¹² Ձեռագիր 9861, էջ 15ա:

Ի միջի այլոց, երկու քրդերի դրվագը բացակայում է «Ժողովրդի խոսք Նարեկացու մասին» վիպական երգում, որտեղ ևս Գորգի պատմությունը տեղ է գտել (279—285)։ Այս վիպական երգում տեղ է գտել նաև ԺԳ սքանչելիքը, որը չկա Քլկուրանցու տաղում։ «Վարք և պատմութեան» ԺԳ սքանչելիքում սկիզբ է առնում Սոս վարդապետների և Նարեկացու վեճը, որը շարունակվում է մինչև ԺԶ սքանչելիքը, երբ սուրբ Նարեկացին հարություն է տալիս մեռածին, իսկ դրանից առաջ, ԺԾ սքանչելիքում՝ մորթված աղավիններին, և այլևս Սոս վարդապետների մեջ կասկած չի մտնում Նարեկացու սրբության հկատմամբ։ Սոս վարդապետները այս դրվագաշարի սկզբում, ԺԳ սքանչելիքում, նախ հեռվից են փորձում Նարեկացուն՝ չուրը, լցնելով ծղոտից գործված կողովի մեջ, ուղարկում են Նարեկացուն։ Ի պատասխան այս հեռակա վեճի, Նարեկացին վերցնում է «գզած բանպակ և մէջն եղ պէժ կրակ և ղութի մի ջրով էլից և զբանպակն կրակով եղ ի մէջ ջրին, զբերանն փակեաց և առաքեաց վարդապետացն»¹³, ուղարկելով նաև երեք նամակ, որոնցից առաջինի ընթերցման ժամանակ բոլոր սանցիք սպիտակամտորու են դառնում, երկրորդ թուղթն ընթերցելիս՝ գարունը աշուն է դառնում, իսկ երրորդն ընթերցելիս՝ ամեն ինչ նորից վերականգնվում է։ Այս հրաշքներից հետո բացում են տուփը և տեսնում, որ բամբակը, կրակը և ջուրը միատեղ են, բայց ոչ բամբակն է կրակից այրվում, ոչ ջուրն է հանգցնում կրակը։

Այս դրվագը նույնպես բացակայում է Քլկուրանցու տաղում, իսկ Սոս վարդապետները, երբ գալիս են ավելի մոտիկից փորձելու Նարեկացուն, որը ԺԴ սքանչելիքում է, արդեն տեղ է գտնում Քլկուրանցու տաղում։ Քլկուրանցին այնքան ճկուն ձևով է ԺԲ սքանչելիքից անցնում ԺԴ-ին, որ «Վարք և պատմութեանը» անծանոթը երբեք չի գգում զրվագներից մեկի պակասը։ 48-րդ տողում, որտեղից սկսվում է Քլկուրանցու տաղի ԺԴ սքանչելիքին համապատասխան մասը, մեռած Գորգին կենդանացնելու համբավն է հասնում Սիս, և վարդապետները Սսից «ճանապարհ անկան» դեպի Նարեկ։

Համբան այլ ի Սիս ճասալ
Սփանչելիք սուրբ վարդապետին.
Նարեկ վարդապետ մի կայ,
Որ կուտայ հոգի մեռածին։ (208—209)

Պարզ երևում է, որ զրվագից զրվագ անցումը շատ ճարտար և ճկուն է կատարված։ Հետագա շարադրանքը Նարեկացու և Սոս վարդապետների հանդիպումն է, որը նույնպես ամբողջությամբ չի համապատասխանում «Վարք և պատմութեան» ԺԴ սքանչելիքին, որն ավելի հարուստ է դեպքերով։ Քլկուրանցու տաղում շկան զավազանով ժայռից ջուր բխեցնելը և ծարաված վարդապետներին անհատնում ջուր մատուցելը։ Այստեղ հրաշքը նաև այն է, որ վարդապետները որքան խմում են, ջուրը ամանում չի պակասում։ Բայց այս դրվագը տեղ չի գտել Քլկուրանցու տաղում, միայն ԺԴ սքանչելիքից Նարեկացու հովիվ լինելն է, որ գրավել է Քլկուրանցու ուշադրությունը։

Սկիհն դէմ յիւաւ առին՝
Կարծէր զոյխաւրն ի գարին,
Քիչ մի գիշատես էր նա,
Մէկ մէկի հային, ծիծաղին։
Հոգով սուրբ էր Նարեկացին,
Իմացաւ զխորհուրդն ի սրտին.
Իմ տէ՛ր, բոզուքին արէ՛ք,

Աշակեւոտ եմ վարդապետին։
Եւրն զայլ սարին նստեր՝
Ու ալաս կենին ոչխարին։
Նայ զգայեւրն ի վայր ձենեց
Ու հովիւ եղիւ ոչխարին.
Զերեմուց զաւագան էաւ,
Դէմ յիւրեն խուցըն զնացին։ (209—210)

Հենց այստեղ էլ ավարտվում է տաղի և ԺԴ սքանչելիքի համընկնումը, և հաջորդ տողից (70-րդ) սկիզբ է առնում տաղի այն մասը, որը համընկնում է ԺԾ սքանչելիքին։ Տաղի այս համավածում ներկայացվում է մորթած աղավիններին հոգի տալը և կենդանացնելը, որը, ինչպես նկատել է Աբրդիանը, «զոտու կրոնական հրաշագործական բնույթ ունի...»¹⁴։ Սոս վարդապետները, երբ տեսնում են այս հրաշքը, այլևս փարատվում է նրանց կասկածը Նարեկացու սուրբ անձի նկատմամբ, և նրանք

Յոտն անկան սուրբ վարդապետին.
Ասեն. Կածնաւս դու, տէ՛ր,
Որ հազարք գեղ գովէին։ (212)

Իսկ «Վարք և պատմութեան» մեջ վարդապետների կասկածը փարատվում է ԺԶ սքանչելիքում, երբ Նարեկացին հարություն է տալիս մորթած գոմեշին։ Ինչպես ասվեց, Քլկուրանցու

¹³ Զեռագիր 9861, էջ 15բ։

¹⁴ Մ. Աբրդյան, նշվ. աշխ., էջ 507։

տաղը թեև իբրև սկզբնաղբյուր օգտագործում է «Վարք և պատմութեան» երեք սքանչելիքները, սակայն ակնհայտ է նաև, որ Քլկուրանցին ժողովրդական նյութի մշակման ընթացքում իրեն ազատ է զգում՝ գրսևորելով ինքնատիպ զգացողություն սրբի կերպարի նկատմամբ: Քլկուրանցու տաղն անվերապահ ունի մի նպատակ՝ նարեկացու կերպարի սրբացումը, որն էլ տաղի, նաև սկզբնաղբյուրի էական նպատակն է: «Այս նարեկացին տարբեր է հայամավուրբային կանոնիկ վարքի հերոսից. ոչ թե վանական խցում ու ճգնարանում հարածամ մեկուսացած աղոթողն է, իր անձն ինքնակամ տանջահարության մատնած կուսակրոնը, այլ պարզ մարդկանց հոգսերով ապրող, խոնարհ, բայց բացառիկ անհատը»¹⁵. — այս խոսքերը թեև ասված են «Վարք և պատմութեան» հերոսի մասին, բայց հավասարապես վերաբերում են նաև Քլկուրանցու տաղի հերոսին:

Կարծում ենք, նարեկացու սրբացման գործում Քլկուրանցու տաղը ևս ունեցել է իր նշանակությունը:

В. А. ЕГИАЗАРЯН — Предание о Нарекаци в обработке Ованеса Тлкуранци.— Вокруг имени Григора Нарекаци, причисленного в средние века к лику святых, сложилась богатая устная народная и церковно-каноническая литература. Предания о нем изданы А. Ганаланияном, а в рукописи № 9861 Матенадарана им. Маштоца содержатся предание «Житие и история святого Григора Нарекаци». Автор статьи определяет это житие как источник песни-тага известного в средневековье поэта Ованеса Тлкуранци, проследживая «и близость к первоисточнику, и неизбежную при художественной обработке волюность интерпретации, и субъективное поэтическое восприятие образа».

¹⁵ Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, էջ 245: